

Վ. ԴԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԴԱՎԱՌԱՊԻՏՈՒԿՅԱՆ
ԻՆՍՏԻԹՍՆԵՐԸ

19 - ՅԵՐԵՎԱՆ - 39

2000000

91(-0)

7-27

2124

Հայաստանի Գաղափար-
գիտությունների ակա-
դեմիայի

Հայաստանի Գաղափար-
գիտությունների ակա-
դեմիայի

Ին.

911(-0)(47)

7-27
Վ. ԴԱՐՅԱՆ

ՄՈՒԳՎՈՒՄ Է: 1931 Թ.

I
7080

A

~~2124~~

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԸ ≡




Պատ. խմբագիր՝ Ս. Սարգսյան
Լեզվ. խմբագիր՝ Արմ. Թամազյան
Տեխ. խմբագիր և սրբագրիչ Հ. Մայիլյան

Գլավլիտի լիազոր Բ—155. պատվեր № 104. տիրաժ 1500

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒ-
ԹՅԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սույն գրքույկով հեղինակն իրեն նպատակ է դրել գեթ մասամբ բավարարել գավառադիտության խնդիրների վերաբերյալ մեր ընթերցող մասնաձևերի և գլխավորապես նրանց աճող հետաքրքրությունը: Գրքույկը կազմված է այնպես, ինչպես և ձևով և ձևով հանդիսանալ ժողովրդագիտության, գլխավորապես և գավառադիտական ակտիվի համար և մեծ չափով կնպաստի գավառադիտության կարեվորագույն խնդիրների կենսագործմանը:



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր հզոր, որ ավուր ծաղկող խորհրդային սոցիալիստական հայրենիքի բազմամիլիոն ժողովուրդների կուլտուրան, վորը զարգացման նոր թափ ստացավ Ստալինյան Սահմանադրութեան վառ արեւի տակ, վորին «ծանոթ չեն անցյալի ազգային անհավասարութեանն ու ճնշումը, փայլում ե ամբողջ աշխարհով, վորպես բանականութեան, մարդկայնութեան և ժողովուրդների բարեկամութեան փարոս» («Պրավդա») :

Ստալինյան Սահմանադրութեանը մեծ իմանդավառութեան հսկայական ակիք բարձրացրեց մեր ժողովրդի մեջ, ստեղծագործ աշխատանքի նոր թափ ուղորդեց ամենալայն աշխատավորական մասսաներին : Ժողովրդի ակտիվութեանը անսպառ աղբյուրի նման սկսեց ե՛լ ավելի վարար հորդել սոցիալիստական շինարարութեան բոլոր թնադավառներում, բարձրացավ մասսաների քաղաքական գիտակցութեան աստիճանը :

Մեր յերկրի բանվորները, կոլտնտեսականները, ծառայողներն ու ինտելիգենցիան, դպրոցականներն ու յերիտասարդութեանը խորապես ձգտում են ավելի մոտիկից ու բազմակողմանիորեն ծանոթանալ խորհրդային բազմազգ ժողովուրդների ծաղկող հայրենիքին, նրա անսպառ հարստութեաններին :

Նրանց հետաքրքրում, հրապուրում ե այն ամենը, ինչ կարող ե ոգտակար լինել սոցիալիստական հայրենիքի տնտեսութեան ու կուլտուրայի ծաղկման դործին, ժողովրդի բարորութեանը:

Շատ լայն են ու խորը մեր հայրենիքի ուսումնասիրութեան հետ կապված խնդիրների ու աշխատանքների ծավալը: Միմիայն մասնագետների ուժերով հնարավոր չե այդ դործն ընդգրկել: Այստեղ պետք ե սգնութեան հան աշխատավորական մասսաները, մեր բոցակառ հայրենասերները՝ հաղարավոր ախտիվիստ դավառագետները:

Մեր յերկիրն ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե կազմակերպել հարյուրավոր խմբակներ դրարոցներում, ԲՈՒՀ-երում, գործարաններում, կուլտընտեսութեաններում, վորոնք բազմակողմանիորեն կուսումնասիրեն իրենց բնակավայրը, շրջանը, հանրապետութեանը:

Ցանկալի արդյունքների հասնելու տեսակետից կարելի ե, վոր այդ խմբակներն ընդգրկեն ուսումնասիրութեան յենթակա առանձին բնագավառներ, որինակ՝ Բանվորա-Պրյուդացիական Իշխանութեան համար վղված պայքարի պատմութեանը, սոցիալիստական շինարարութեան տարբեր բնագավառներ, աշխարհագրութեան, պատմութեան, հնադիտութեան, յերկրաբանութեան ե այլն, դրանց ուսումնասիրութեան համար կազմակերպելով բնասերների, բնագետների, յերիտասարդ դավառագետների ե այլ խմբակներ:

Բացի խմբակներից, բոլոր տիպի դարոցներում ախումբներում, հիմնարկ-ձեռնարկութեաններում

ինչպէս նաև թանգարաններում, անհրաժեշտ և կազմակերպել դասախոսութիւններ ու զրույցներ բնագիտական հարցերի, բնական հարստութիւնների, և բնական գիտութիւնների ուսումնասիրութիւնների, իր բնակավայրի պատմութեան, ազգագրութեան, Փոփոխութի (բանահյուսութեան) մասին և այլն:

Անհրաժեշտ և կազմակերպել աշխարհադրական, բնագիտական, կուլտուր-պատմական եքսկուրսիաներ և տուրիստական արշավներ, առանձնապէս դեպի քաղաքացիական կռիւիների վայրերը, եքսպեդիցիաներ ու պատկար հանածոներ հայտնաբերելու նպատակով և բազմաթիւ այլ եքսկուրսիաներ ու տուրիստական արտելքներ:

Գալատագիտական այս աշխատանքներում պետք է ներդրուի ուսանողական, աշակերտական և ուսուցչական մոլորակաւոր, նախաձեռնող և խանդավառութեամբ գործի կազմող մարդկանց, լաւագույն կազմակերպիչների:

Գալատագիտական գործի հաջողութեանը մեղ մոտ ապահովված չի լինի, յետե մենք այն սերտորեն շկտպենք շրջանի ու հանրապետութեան տնտեսական և կուլտուրական պլանային շինարարութեան հետ:

Պլանային տնտեսութեան, ինչպէս նաև կուլտուրական շինարարութեան համար հսկայական նշանակութեան ունի պլանների կոնկրետացումը բոլոր շրջանների, հաշիւի տոնելով նրանց բոլորի առանձնահատկութիւնները (շրջան, մարզ, հանրապետութեան):

Այս տեսակետից հսկայական նշանակութեան և ստանում գալատագիտութեանը, մտրն ողնում է ներգրավելու մաստաներին սոցիալիստական շինարարու-

Թյան կոնկրետ խնդիրները կիրառման գործում, ոչ-
նում և նրանց կենտրոնացնելու իրենց ուշադրությու-
նը տնտեսական, կուլտուրական և կենցաղային շինա-
րարության ավելի հրատապ խնդիրները վրա :

Տեղին և հիշել, թե ընկեր Լեւինն ինչպես եր-
գնում պլանային տնտեսության և այդ պլանների ի-
րականացման գործում մասնաներին ամենամոտ և
անմիջական մասնակցության մեջ ներգրավելու հար-
ցերը :

1920 թվին, փետրվարի 23-ին, յերբ Համառու-
սական ԿԳԿ նստաչափանը պետք է ընդուներ ելեկտրո-
ֆիկացիայի վերաբերյալ բանաձեւը, ընկ. Լեւինը նը-
շեց, վոր՝

«Սորհրդային Ռուսաստանի համար առաջին
անգամն է հնարավորությունն ստեղծվել պատգի-
լու ավելի պլանաչափ տնտեսական սոց. շինարա-
րությամբ, գիտական վերամշակմամբ և հետեվո-
ղականորեն կյանքում կիրառելու ամբողջ ժողո-
վրդական տնտեսության (պետական պլանը)» :

Նա շտապեցնում էր ավարտել այդ պլանի մշա-
կումը և հաստատել այն : Նա հանձնարարում էր ձեռք
առնել թուրք միջոցներն ամենալայն կերպով կազմա-
նիրպելու այդ պլանի պրոպագանդայի գործը :

«Այդ պլանի ուսումնասիրությունը, պետք է
մտցնել առանց վորեւ բացառության, հանրապե-
տության թուրք ուսումնական հաստատություննե-
րում» և այլն :»

1920 թվի հունվարի 1-ին, ընկ. Կրթիժանովսկուն
ուղղված նամակում ընկեր Լեւինը մտահոգություն և
արտահայտում այն բանի առթիվ, թե անհրաժեշտ է

բանվորների և գյուղական մասսաներին ներդրավել
ելեկտրիֆիկացիայի պլանի աշխատանքների մեջ, սո-
ցիալիստական շինարարութեան և սոցիալիստական
տնտեսութեան առաջին պլանավոր պլանի իրագործման
մեջ:

«Ձե՞ կարելի արդյոք,— գրում եր Աեհինը,—
ավելացնել մոշ թե տեխնիկական պլան (այդ, ի-
հարկե, շատերի գործն է և մոշ շտապողական),
այլ քաղաքական և պետական, այսինքն՝ պրոլե-
տարիատին հանձնարարված գործ... Այն պետք է
տալ աշխատ, մորպեսզի հասկանալի, հանրամատ-
չելի, մասսաների համար պարզ ու պայծառ
(միանգամայն գիտական հիմքով) հեռանկարներով
գրավել. ի հարկե, պարզ է, մոշ 10—20 տարվա
աշխատանքով մենք ամբողջ արդյունարեքական և
գյուղատնտեսական Ռուսաստանը կդարձնենք
եյեկտրական... Կրկնում եմ, պետք է բանվորնե-
րի և գիտակից գյուղացիների մասսաները 10—20
տարվա մեծ ծրագրի գործի մեջ քաշել»:

Պլանային տնտեսութեան մեծազույն նշանակու-
թյունը, մորը բնորոշ է միայն Խորհուրդների Յերկրի
համար, պետք է առաջին հերթին հիշի յուրաքան-
չյուր պավառագետ և սոցիալիստական հայրենիքի
այդ պլանի սահմաններում միտոսի ու գանի իր անմի-
ջական ուսումնասիրութեան քննազավառը և սոցիա-
լիստական շինարարութեան մեջ իր պատվավոր տեղը:

Այսպիսով միանգամայն պարզ է, թե ինչպիսի
խոշոր խնդիրներ են դրված խորհրդային գաղառա-
գիտութեան առաջ:

Խորհրդային գաղառագիտությունը պետք է աշ-

խառի սոցիալիստական արդյունարեւության ու դյու-
դատնասութեան, ԽՍՀՄ աշխատավորների ծաղկող
կուլտուրայի ե՛լ ամէլի բարգաւաճման համար:

Սորհրդային գաղափարաբանութեանը միաժամանակ
հանդիսանում է բանվորների և դյուղացիների մաս-
սաների մեջ գիտութեան կիրարկման ուսալ ձեւերից
մեկը, ստանձնապես յերիտասարդութեան մեջ. դրա
մասին եր ատում ընկեր Լեւիւր, յերբ նա պահանջում
էր, զոր գիտութեանը իրականում պետք է միս ու
արյուն դառնա, կազմելով ամբողջապես կենցաղի ան-
միջական և իրական մասնիկը:

Այսպիսով Սորհրդային գաղափարաբանութեանը
հանդիսանում է Սորհրդային հայրենասիրութեան,
դեպի մեր մեծ հայրենիքն աննկեղ մասսաների սիրտ
գասախարակութեան հզոր լծակներից մեկը:

* * *

Հագարավոր աշխատավորներ ճանապարհորդու-
թյուններ են կատարում, եքսկուրսիաներ ու եքսպե-
դիցիաներ են կազմակերպում դեպի մեր լայնածափալ
յերկրի հեռավոր անկյունները, դեպի յերկնամբարձ
լեռներն ու կապուտակ ջրերը, ուսումնասիրելու և
ճանաչելու մեր սքանչելի հայրենիքը:

Բազմաթիւ աշխատավորներ ու դպրոցականներ ալ-
ցելում են իրենց դյուղում, շրջանում, քաղաքում
զանալող գործարանները, Փարբիկաները, հանքերը,
կոյրանասութեանները, հեռիտան արշավներ են կազ-
մակերպում դեպի քաղաքացիական կովի վայրերը,
ճանոթանում են Մեծ Հոկտեմբերի համար մղած պայ-
քարի պատմութեանը, ուսումնասիրում են մեր յերկ-
րի ընդերքը:

Մեր յերկիրը ճանաչելու ձգտումը քանի՛ զնում
ապելի ու ապելի մեծանում և աշխատավորական
դանդավաճներում: Սակայն այդ խնդրում բացակայում
է մեր համապատասխան հիմնարկ-կազմակերպու-
թյունների (Ժողկրթբաժիններ, ակումբներ, պրոֆ-
ժիտթյուն և այլն) անհրաժեշտ ղեկավարությունը և
կազմակերպված ունությունն ու սթանդակությունը:

Անցյալում դոյություն ունեցող գալատագիտական
ընկերություններում և գալատագիտական բյուրոնե-
րում ծվարած Ժողովրդի թշնամիները կազմակերպե-
ցին այդ վարևոր բնադավառում խոշոր վնասարարու-
թյուն: Նրանք գալատագիտական ընկերությունները
դարձրեցին անդործունյա կազմակերպություններ,¹
նրանք գալատագիտական աշխատանքները կտրել էյին
մեր ասորյա քաղաքական խնդիրներից և այն վեր ե-
յին ամել միայն «բնական հարստություններ» ուսում-
նասիրող ապարադաքական մի կազմակերպության:

Ահա թե ինչու միանգամայն Ժամանակին եր ու
տեղին, յերբ մեր վերապաս որդանները 1937 թ. փո-
րոչում ընդունեցին վերացնելու գալատագիտական
բյուրոները և ընկերությունները:

Այդ կազմակերպության վերացումից հետո, փո-
խանակ դործը տեղից շարժելու և անհապաղ վերաց-
նելու վնասարարության հեաքերը, քնդհակատակը,
գալատագիտության աշխատանքները հանցավոր կեր-
պով գրեթե բոլորովին մոռացության արվեցին: Վո-
րոշ շրջաններում ու զպրոցներում դոյություն ունե-
ցող գալատագիտական նյութերը ցաք ու ցրելի արվե-
ցին, քայքայվեցին փոքրիկ գալատագիտական թան-
գարանները:

Նույնիսկ գտնվեցին մարդիկ, վորոնք դավառա-
դիտական ընկերությունների վերացումը բացատրե-
ցին, վորպես դավառադիտական աշխատանքների վե-
րացում:

Այդ անշուշտ թշնամական վերաբերմունքի արտա-
հայտություն էր դեպի Սորհրդային դավառադիտու-
թյունը և դավառադիտական ակտիվը:

Խորհրդային գավառագիտությունը մեր յերիտա-
սարդության մեջ դարբնում է վառ սեր դեպի մեր
մեծ Խորհրդային Հայրենիքը:

Այս տեսակետից էլ, դավառադիտական աշխա-
տանքների կազմակերպիչներն ու ենտուզիաստները
չըջաններում, դպրոցներում, գործարաններում և
այլ ձեռնարկություններում ու հիմնարկություննե-
րում հանդիսանալու յեն գերազանցապես մեր յերիտա-
սարգությունը, կոմյերիտականները և կոմյերիտա-
կան կազմակերպությունները:

Կոմյերիտության ասաջատար գերն այս խընդ-
րում հսկայական է:

Ինչպիսի խնդիրներ է դնում իր սուսջ խորհրդային
գավառագիտությունը:

1. Զարգացնել լայն ժողովրդական մաստաների
մեջ ինքնագործունեյություն և դարձնել նրանց սո-
ցիալիտական շինարարության ակտիվ կառուցողներ:

2. Մեր հայրենիքի հեռախուզական ուսումնասի-
րությունների մեջ (անտեսություն, սլաոմություն,
կուրսուրա, կենցաղ, սլոտակար հանածոներ և այլն)
ներդրավել ժողովրդական ավելի լայն մաստաներ:

3. Մաստաներին ծանոթացնել մեր յերկրի, չըջա-
նի, բնակավայրի հետ:

Հարկավոր և հազարավոր բնասերների, բնապետների, յերիտասարդ գավառապետների, աշխարհագրութեան հարցերով հետաքրքրվողների, պատմութեան, հնագիտութեան, յերկրաբանութեան, Մեծ Հովտների համար մղված պայքարի պատմութեամբ, սոցիալիստական շինարարութեան հարցերով զբաղվողների բազմաթիվ իմբակներ կազմակերպել գալրոցներու, ակումբներու, կոլտնտեսութեաններու, գործարաններու և այլն: Միաժամանակ հարկավոր և այլ բոլոր հարցերի շուրջը կազմակերպել նաև գրույցներ: Անհրաժեշտ են դասախոսութեաններ առանձին շրջանների ազգագրութեան, Փոլիկորի մասին, հարկավոր են աշխարհագրական, բնապիտակական, կուլտուր-պատմական եքսկուրսիաներ, սուրիստական արշավներ՝ առանձնապես դեպի քաղաքացիական կռիվների վայրերը, եքսկուրսիաներ դեպի ողտակար հանածոների վայրերը և այլն:

Պոչոր անելիքներ ունեն շրջանային ժողկրթաբաժինները, վորոնց վրա յե ընկնում գավառապիտակական աշխատանքների կազմակերպման ու զեկավարման վոզ պատասխանատւութեանը: Նրանք գործի մեջ քայնորեն պետք և ներդրովեն դպրոցները՝ աշակերտութեանը, ուսանողներին, ուսուցիչներին: սոաջովոր դեր ունեն կատարելու նաև պրոֆմիութեանները, ակումբները, պիտներական կազմակերպութեանը:

Պորհրդային գավառապիտութեան աշխատանքները պատշաճ բարձրութեան վրա դնելու համար պետք և բոլոր շրջաններում ստեղծել գավառապիտական թանգարաններ և այնտեղ կենտրոնացնել վոզ աշխատանքը:

ԻՆՉ Ե ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր յերկրում ունենք հազարավոր գավառագետներ, դա ապացույց է այն բանի, վոր մեր մեծ ու հզոր հայրենիքն ուսումնասիրելու, այն ճանաչելու ցանկությունը շատ մեծ է Նորհրդային ժողովրդի մեջ:

Բանլորները, կոլանտեսականները, ինտելիգենցիան, ծառայողներն ու մասնագետները, մեր դպրոցականներն ու յերիտասարդությունը ծարավի յեն մոտիկից ճանաչելու և ուսումնասիրելու մեր ծաղկող ու յերջանիկ կյանքով ապրող աշխատավորների մեծ հայրենիքը: Նրանց հետաքրքրում է այն ամենը, ինչ ոգտակար է և ինչ նպաստում է սոցիալիստական հայրենիքի ամրապնդմանը, բարգավաճմանը, պաշտպանունակությանը:

Այժմ մեր յերկրում ունենք բազմաթիվ սպասանի և յերիտասարդ գավառագետ կոմյերիտականներ և պիոներներ, վորոնք հսկայական ոգտակար աշխատանք են կատարում: «Ուզում եմ ոգտակար լինել մեր սիրելի հայրենիքին, ուզում եմ ոգնել սոցիալիստական շինարարությանը»—ասա թե ինչն է վորեչնչում և առաջ մղում սպասանի ու յերիտասարդ գավառագետին:

Գավառագիտությունը, վոր բառացի նշանակում է «գավառը գիտենալ», այսինքն՝ ճանաչել տվյալ

վայրը գեռ ևս չի արտահայտում այդ հասկացողութեան վողջ ելությունը, նշանակութիւնը: Դեռևս մեր վորոչ դավառապետների մոտ դոյություն ունի այն թյուր կարծիքը, թե դավառագիտական ուսումնասիրութիւնների որչեկտը պետք է հանդիսանա միմիայն շրջանը, ստանձին վայրը, դյուղը, քաղաքը:

«Գավառագիտութիւնը չի կարող ընդգրկել վողջ հանրապետութիւնը, այն ժամանակ այդ դավառագիտութիւն չի լինի»—ասում են այդ մոտեցման կողմնակիցները:

Անշուշտ, սխալ է հարցի այդպիսի մեկնաբանումը: Հասար ի՞նչ է դավառագիտութիւնը:

Սորհրդային դավառագիտութիւնը այդ՝ խորհրդային հայրենագիտութիւնն է, մեր հայրենիքը ճանաչելու, ուսումնասիրելու միլիտնավոր աշխատավորների բուն տենչանքը: Իսկ մեր հայրենիքը հո միայն չի՞ սահմանափակվում շրջաններով: Այստեղից միանգամայն պարզ է, վոր դավառագիտական ուսումնասիրութիւնների որչեկտը չի սահմանափակվում շրջաններով, մի հանրապետութեամբ, այլ նա ընդգրկում է վողջ Սորհրդային Միութիւնը, բոլոր ժողովուրդների մեծ հայրենիքը:

Մեր կոլտնտեսականի, բանվորի, ինտելիգենտի, դպրոցականի բուն ցանկութիւնն է, վորչ միայն ուսումնասիրել իր կոլտնտեսութիւնը, իր շրջանը, իր վայրը, այլ նաև մեր յերկրի կենտրոնական մասերից մինչև վ հեռավոր ծայրամասերն ընկած հետաքրքիր որչեկտները, գործարանները, հանքերը, կոլտնտեսութիւնները, պատմական նշանակութիւն ունեցող հե-

ասքրքիր վայրերը և այլն :

Մեր յերկրի, շրջանի, բնակավայրի ճանաչողությունը՝ պատմության, բանվորների և դյուղացիների իրենց շահագործողների դեմ մղած պայքարի հերոսական մարտերի և անցքերի ուսումնասիրությունը, բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունը, ոգտակար հանածոների հայտնաբերումը, տեղական ֆուկլորի, ազգագրության, հնությունների ուսումնասիրություններն ու հավաքը — ահա այս բոլորն ողնում և գավառապետին ճանաչելու մեր յերկրի անցյալը և սքանչելի ներկան :

1932 թվին, ԽՍՀՄ ընդերքի միութենական հետախույզություններ կազմակերպելու առնչությամբ «Կոմսոմոլսկայա պրավդա»-յի խմբագրությանն ուղղած իր նամակում ընկ. Վ. Վ. Կուլբիշևիլը գրել և—

«Մենք դեռևս չատ քիչ ենք ճանաչում մեր յերկիրը : Մենք պետք է ճանաչենք մեր յերկիրը : Այս խնդիրը չի կարելի կատարել միայն մասնազետ յերկրաբանների ուժերով, հետախույզական պարտիաների միջոցով, վորոնք ուղարկվում են մեր գիտական և անասական մարմինների կողմից :

Մեր բնական հարստությունների ուսումնասիրությունը չի կարելի պատկերացնել, առանց բանվոր դասակարգի շարքերից գործի մեջ ներդրավելու կամափոր աշխատողների լայն մասսաների» :

Ընկ Կուլբիշևի այս խոսքերը պետք է միշտ հիշել, յերբ խոսքը վերաբերում է մեր յերկիրը ճանաչելուն :

Այստեղից պարզ է, վոր Խորհրդային գավառապետությունը վոչ թե ազաքազաքական գործ է, այլ

մասնայական, քաղաքական, կուլտուրական մեծ դործ
և, սոցիալիստական արդյունաբերութեան և դյուզա-
տընտեսութեան զարգացմանը նպաստող, ԽՍՀՄ աշ-
խատավորութեան ծաղկող կուլտուրայի զարգացմանը
նպաստող դործ, մեր մեծ յերկիրն ու առանձին շրջան-
ները բաղմակողմանի և գիտականորեն ուսումնասի-
րող արժեքավոր դործ:

A $\frac{I}{7080}$

2124



ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Գաղափարագիտական թանգարանը պետք է դառնա գաղափարագիտական հետաքրքիր և ոգտակար աշխատանքների ողջախր:

Այդպիսի գաղափարագիտական թանգարաններ մենք շատ ունենք: Միմիայն Յերեվան քաղաքում իրենց աշխատանքների բնույթով գաղափարագիտական են քաղաքային, տեխնիկա - տնտեսագիտական և պատմական թանգարանները:

Մեր այդ գաղափարագիտական, ինչպես նաև շքրջկենտրոններում գտնվող թանգարանների հիմնական թերությունն այն է, վոր նրանք կոնկրետ, կենդանի փորձի հիման վրա չեն կարողանում կազմակերպել, իրենց շուրջը համախմբել գաղափարաությամբ հետաքրքրվող մասսան, ակտիվը:

Մեր հայրենիքի խոր ուսումնասիրության դործում ակտիվ կերպով պետք է մասնակցեն դպրոցները, բորձրագույն ուսումնական հիմնարկները, ձեռնարկությունները, կոյտնտեսությունները, բանվորական ակումբները, քաղլուս հիմնարկների ցանցը, հետազոտական ինստիտուտները և այլն:

Գաղափարագիտական բոլոր ուսումնասիրությունները պետք է կազմակերպել թանգարաններում: Թան-

գարանները դառնալու յեն դավառազիտական հետա-
գոտական և մեքոդական աշխատանքների՝ կենտրոնը,
գավառագիտական աշխատանքների բազաներն ու լա-
բորատորիաները :

Հեռագոտությունների և ուսումնասիրություննե-
րի բոլոր արդյունքները յերկրարանական, հնադիտա-
կան, բուսական, կենդանական, կենցաղային և այլ
նյութերը կենտրոնացվում են թանգարաններում և
հեռագայում վերամշակման յենթարկվելով, թանգա-
րանների ցուցադրման անհրաժեշտ ֆոնդերն են կազ-
մում : Գավառագիտական թանգարանների պլանները
պետք է լինեն ակտուալ և հաշվի առնելով դավառա-
զիտական հասարակայնության պահանջներն ու ու-
ժերը, պետք է առաջադրել կոնկրետ թեմաներ :

Այդ պլանները պետք է կազմվեն այնպես, Վոր
դավառագիտության բնագավառով յուրաքանչյուր
հեռաքրքրվող կարողանա մատչելի և պատկերավոր
ձևով ճանաչի իր հայրենիքը—տվյալ բնակավայրը,
չրջանը, ֆարրիկան, կոլտնտեսությունը և այլն :

Այդ պլաններում առանձնահատուկ տեղ պետք է
տալ ուսանողներին ու աշակերտությանը գիտահետա-
զոտական աշխատանքների մեջ ներդրավելուն, իհարկե,
մանկտվարժների, դյուղատնտեսների, պատմաբան-
ների և մյուս մասնագետների ղեկավարությամբ :

Թանգարանները պետք է կազմակերպեն նաև առան-
ձին դավառագետների, խմբերի և խմբակների մեթո-
դական և կազմակերպչական ոգնության գործը :

Թանգարաններն ակտիվ կերպով պետք է դբադվեն
գալաուազիտական աշխատանքների կազմակերպման
գործով: Վրն է այդ աշխատանքը.—գալաուազիտա-
կան խմբակների հետ միասին համատեղ ուսումնա-
սիրություններ, արշավներ, եքսպեդիցիաներ և ար-
տեւքներ կազմակերպելու միջոցով ուսումնասիրու-
թյան յենթարկել շրջանը, բնակավայրը՝ սիստեմա-
տիկ կերպով ուղղություն տալով այդ ձեռնար-
կումներին:

Այդ համատեղ աշխատանքի արդյունքը պետք է
արտահայտվի թանգարանի ցուցադրումներում և ցուցա-
հանդեսներում: Այնուհետեւ, շատ արդյունավետ կլի-
նի ուսումնասիրված հարցերի շուրջը կազմակերպել
գասախոսություններ և զրույցներ թանգարաններում,
դպրոցականի սենյակներում և անկյուններում: Թան-
գարանը պետք է ոժանդակի և ունի դպրոցներում,
դործարաններում, կուլտոսեսություններում, ակումբ-
ներում, կուլտուրայի տներում և այլ վայրերում կազ-
մակերպելու թանգարանի կարիներտներ, ցուցահան-
դեսներ, դրանք հետագայում վերածելով թանգարանի
Փիլիալներին:

Թանգարանները սերտ կապ պետք է պահպանեն բո-
լոր գրադարանների, կուլտոսեսային և բանվորական
ակումբների, կուլտուրայի տների, խրճիթ-լաբորա-
տորիաների, փորձնական կայանների հետ, կազմա-
կերպելով այնտեղ գալաուազիտական խմբակներ,
զրույցներ, գասախոսություններ, դեկուցումներ, կոն-
ֆերանսներ, ցուցահանդեսներ:

Փորձնական կայանների և խրճիթ-լաբորատո-
րիաների հետ շափազանց ողաակար աշխատանք կա-

քելի յե կատարել, կազմակերպելով փորձնական աշխատանքներ մոլորաստերի և դյուղատնտեսութեան վնասատուների դեմ պայքարելու ուղղութեամբ:

Թանգարանները և դավառագիտական խմբակները պետք է սերտ կապ ունենան Կուսպատի, Հնությունների պահպանութեան Կոմիտեյի, ինչպես նաև Հանքապետութեան, շրջանի, բնակավայրի պլանային և անտեսական կազմակերպութեաններին հետ:

Պարտադիր է նաև սերտ կապ պահպանել տվյալ վայրում գործող եկսպեդիցիաներին հետ:

Մեր Թանգարանային աշխատողները չպետք է մոռանան, Վեր իրենց յուրաքանչյուր քայլ աշխատանքը դավառագիտութեան ուղղութեամբ, դա՛ մասաշխական — կրթական գործ է, կուլտուրական — բազմազան մեծ գործ է:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՏԵՂԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԳԻՏԱ- ԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Գավառագիտությամբ կարող են զբաղվել ամենքը, ովքեր ցանկանում են ճանաչել, ուսումնասիրել այն շրջանը, հանրապետությունը, վորտեղ ապրում են:

Այստեղից պարզ է, վոր գավառագետը նա յե, ով սխտեմատիկ զբաղվում է ավյալ վայրի ուսումնասիրությամբ, ով քիչ թե շատ ճանաչում է այն վայրը, այն յերկիրը, վորտեղ ինքն ապրում է:

Այդպիսի գավառագետներ մենք շատ ունենք, վորոնք դլխավորապես աճել ու առաջ են յեկել մեր յերիտասարդներից, գերազանցապես լենինյան կոմյուրիտմիության շարքերից, յնչպես և մեր գալրոցականներից:

Բայց գավառագետի յնդիրն է վոչ միայն սոսկ ուսումնասիրել, նկարագրել տեղական վայրի և բնակչության կյանքին ու կենցաղին վերաբերող բազմաթիվ յերեվույթներ, այլ նաև հավաքածու կազմել, այսինքն հավաքել դանազան իրեր ու տեղեկություններ տնտեսության, բնակչության կյանքի ու աշխատանքային գործունեության վերաբերյալ և այլն:

Բոլոր հավաքված իրերից էլ հետադայում կազմվում է ավյալ վայրին վերաբերող ամբողջ հավաքա-

ծուն: Դրանք դասավորվում են վորոշ կարգով, ըստ բնույթի և յուրաքանչյուր իրի կամ եքսպոնատի վերաբերյալ տրվում է վորոշ բացատրություն:

Այդպիսով իրերի հավաքածուները բավարար չափով լինելուց հետո (յեթե իրոք նրանք վորոշ արժեք են ներկայացնում) պետք է տեղում — դյուղում, շրջկենտրոններում կամ դպրոցներում, տեղական թանգարանի հիմքը դնել:

Այդ թանգարանները հետագայում կդառնան գալառապետական աշխատանքների կենտրոնը, հետզհետե իրենց շուրջը կհամախմբեն հետաքրքրվող մաստաներին և դպրոցականներին: Հետաքրքրությունը դեպի գալառապետությունը այդպիսով որեցոր ավելի կը դարդանա ու կծախարկի:

Թանգարանը հնարավորություն կունենա նպատակու տեղական ազդարնակչության կրթական մակարդակի բարձրացմանը, վորը թանգարանի հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանալու:

Հայկական ՍՍՀ Լուսժողկոմատի գալառապետական աշխատանքները կազմակերպելու կադակցությամբ հրահանգում պարզ ասված է, վոր՝ «այդ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ամբողջ պատասխանատվությունը շրջանում ընկնում է շրջանային Ժողկրթբաժիններին վրա, վորոնք այդ գործի մեջ պետք է լայնորեն ներգրավեն դպրոցները — աչակերտությանը, ուսանողներին, ուսուցիչներին, աղումները, պիոներ կազմակերպությունները և հատկապես կոմյերիտական կազմակերպությանը»:

Այսպիսով, հավաքելով այն ամբողջը ինչ ախպի-

բական և տվյալ շրջանի համար, պետք և տեղական կամ շրջանային դավառագիտական թանգարանի հիմքը դնել:

Գավառագիտական թանգարանը, այսպիսով, հիմնականում պետք և ունենա հետեւյալ բաժինները.

1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Այս բաժնի ցուցադրումը պետք և տա մարդկային հասարակության դարգացման մասին կարելիոր տեղեկություններ հանրապետությունում կամ շրջանում. դեպքերը պետք և ցույց տալ պատմական ժամանակաշրջանի կարգով:

Այս բաժնում պետք և ցուցադրել նաև պատմական խոչոր արժեք ներկայացնող հնությունները — նկարներով, մակեաներով ու մոդելներով:

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Այս բաժինը նյութեր և տալիս հասարակական ձեւերի դարգացման պատմության վերաբերյալ մինչեւ սոցիալիզմի շրջանը՝ ժամանակագրական կարգով: Այստեղ պետք և ցույց տալ, թե ինչպիսի պատմական շրջաններ ու պայքարի ուղիներ և անցել հասարակությունը (տվյալ շրջանի, վայրի) մինչեւ մեր սրբը հասնելը:

3. ԲՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ.

1. Արտադրական ուժերի և բնական հարստությունների ուսումնասիրություններ.

Ա) Ռայոնի ընդհանուր նկարագրություն.

Բ) Տեղական տրանսպորտի ուսումնասիրություն.

Գ) Հումքային բետուրաների ուսումնասիրություն.

Դ) Հայտնաբերել և ուսումնասիրել անհետացող

արհեստները, նրանց արտադրութեան միջոցները:

2. Պայխար 7-8 միլիարդ փութ հացահատիկի համար.

Ս) Մոլախոտերի հետազոտութիւն և նրանց քարթալորումը.

Բ) Անասնաբուծութեան կերային բազայի տեղահան լրացուցիչ աղբյուրները հայտնաբերումը.

Գ) Նոր հողամասերի ուսումնասիրութիւն (խոպաններ) և այն իրացնելու պայմանները.

Դ) Ֆենոլոգիկ դիտողութիւններ.

Յե) Նյութերի հալաքումը և պատրաստումը Համամիութենական Գյուղատնտեսական Յուցահանդեսի համար:

3. Հեղափոխական շարժման պատմութեան նյութերի հալաքումը, դործարանների, Փարբիկաների պատմութեան, Ֆոլկլորային նյութերի հալաքումը և այլն:

Գափառապիտական թանգարանի վողջ ցուցադրումը պետք է բնագրկի մոտաւորապէս հետեւյալ հարցերը.

1. Մեր կոլտնտեսութեան պատմութիւնը.

2. Հիշողութիւններ քաղաքացիական կռիւներից.

3. Ինչպէս կոլտնտեսութիւնը հասավ ռեկորդային բերքի.

4. Ինչպէս բարձրացավ աշխատանքի արտադրողականութիւնը կոլտնտեսութիւնում — կաթնատուութիւնը, բերքատուութիւնը և այլն.

5. Ինչպիսի ողտակար հանածոներ կան շրջանում, գյուղում — հալաքել, հալաքածո կազմել և ցուցադրել.

6. Ինչպիսի բույսեր կան շրջանում, դյուրում—
հավաքել, նկարագրել, հերբարիումներ կազմել և
ցուցադրել:

7. Շրջանի կենդանական աշխարհը—նկարագրել,
ցուցադրել:

8. Սոցիալիստական տնտեսության նվաճումները
—լուսանկարներ, դիագրամներ:

9. Շրջանի անվանի մարդիկ—լուսանկարներ, նրանց
կիրառած նոր մեթոդների ցուցադրում և այլն:

10. Շրջանի հնությունները—ցուցադրել լու-
սանկարներով, նկարագրել և այլն:

11. Շրջանի, հանրապետության աշխարհագրա-
կան նկարագրությունը:

12. Կենցաղի, կուլտուրայի, անհետացող արհեստ-
ների, կուլտուր-լուսավորության և մի շարք այլ բնա-
դավանների մերաբերյալ հարցեր:

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԳՊՐՈՑԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նույնը տեղ է տրվում գաղթացական գաղափարա-
տույթյանը: Համ.Կ(բ)Կ. Կ.Կ. 1932 թ. ոգոստոսի 26-ին
իր ընդունած՝ «Տարրական ու միջնակարգ դպրոցի
ծրագրի ուժիմի մասին» վորոշման մեջ նշում է
այն անհրաժեշտությունը, վոր հանրակրթական դպրո-
ցի հասարակագիտություն, գրականություն, լեզվի,
աշխարհագրություն և պատմություն պծով դասավան-
դել «կարեվորադույն պիտելիքներ ՆՍՀՄ ժողովուրդ-
ների ազգային կուլտուրաների վերաբերյալ, նրանց
գրականություն, արվեստի, պատմական պարզացման,
նույնպես և ՆՍՀՄ գաղափարապետության տարրերը՝
բնություն առանձնահատկությունները, արդյունաբե-
րություն, դյուղատնտեսություն, սոցիալ-տնտեսա-
կան պարզացումը և այլն»:

Գաղափարապետական աշխատանքներն ամբողջապես
լինթարկվում են դպրոցի ուսումնա - դաստիարակչա-
կան նպատակներին և ոժանդակում են դպրոցական -
ներին ալիլի լավ յուրացնելու դասավանդվող մի շարք
առարկաներ, ինչպես որինակ՝ աշխարհագրություն,

պատմութիւն, բնագիտութիւն և այլ ուսումնական առարկաներ, կապելով նրանց ուսումնասիրութիւնը շրջապատող կյանքի հետ :

Գալառագիտութիւնը դպրոցում ունի խոշոր դաստիարակչական նշանակութիւն — նա ոժանդակում է ավելի կենդանի և աշխույժ դարձնելու ուսուցումը, ոժանդակում է մեթոդների բարելաւմանը (գիտողականութիւն, կոնկրետ ուսուցում, դիտողութիւնների անցկացում, եքսկուրսիաներ և տուրիստական արտելքներ, լաբորատոր աշխատանքներ և այլն) :

Գալառագիտական աշխատանքներն անցկացվում են ուսումնական ծրագրերի դասավանդման հետ սերտորեն կապված, այդ նպատակի համար սպասարկութիւնով դասառագիտական աշխատանքների ընդլրկած ձեւերը :

Այդ աշխատանքը գլխաւորապէս պետք է անցկացնել աշխատանքի ժամերից դուրս, սլառանի բնասերնների և դասառագիտական այլ խմբակների միջոցով :

Գալառագիտական աշխատանքների համար կարիք չկա հատուկ կազմակերպութիւններ ստեղծել, ինչպիսիք անցյալում ընկերութիւններն ու բյուրոներն էին : Գալառագիտական աշխատանքը կարելի չէ և պետք է անցկացնել սովորաբար դոյութիւն ունեցող կազմակերպութիւնների շրջանակներում և նրանց անմիջական ղեկավարութեամբ : Այդպիսի կազմակերպութիւններն են դպրոցը և նրա աշակերտական ու ուսուցչական ակտիվը կամ ԲՈՒՀ-երն ու ԲՏՈՒՀ-ները, վերոնց սրահկազմակերպութիւնների պլանների մէջ պետք է արտահայտվեն դասառագիտական աշխա-

տանքները կամ բանվորական ակումբների, պրոֆեսիո-
թյունների կուլտ աշխատանքներում և նրանց սկզբնա-
կան կազմակերպութիւններում, ձեռնարկութիւննե-
րում, հիմնարկութիւններում, կուլտուրայի տներում,
կոլանտեսային ակումբներում և քաղ-լուսավարական
փողջ ցանցում. պիտներական տեխնոլոգիաներ, պիտնե-
րական պարտո, պատանի բնագետները կազմակերպու-
թիւններ, պատանի տուրիստի տուն, ԼԿՅՆՄ կազմա-
կերպութիւններ և այլն: Առանձնապէս պիտի նշել
քանգարանները, վորոնց կազմակերպչական նշանա-
կութիւնն անչափ մեծ է գալառագիտական աշխա-
տանքների սիստեմում, ապա ժողովրդական կրթութեան
արգանների աշխատանքները, դեպուտատների խոր-
հուրդների կուլտեսկցիաների աշխատանքները և այլն:

Գալառագիտական խնդիրները պետք է արժանի
տեղ գտնեն վոչ միայն քանգարանների ու Հուշար-
ձանների պահպանութեան պլաններում, այլ ման-
րագների, ժողկրթութեան և յուստոգիտութեան
դպրոցական և քաղլուսավորման աշխատանքների պլա-
նում ու ձեռնարկումներում:

Թանգարաններն իրենց հնարավորութիւններով
այս պայմաններում դառնում են վորակյալ ուսում-
նական ձեռնարկներ:

Լուստողկոմատի և ժողկրթութեան շրջանում
պարտավորութիւնն է դրվում ողտադրժելու դաժու-
րագիտութեան բոլոր հնարավորութիւնները, առաջին
հերթին նկատի ունենալով թանգարանները:

Իրա համար պետք է ժողկրթութեան շրջանում կից և
ժողկրթութեան վարիչների ղեկավարութեամբ քա-

տեղծել խորհուրդներ՝ կազմված դավառադիտական ակտիվից և այդ գործի հետ կապված կազմակերպությունների ներկայացուցիչներից :

Նպատակահարմար և թանգարաններին կից ևս կազմակերպել մշտական խորհուրդներ՝ կազմված դավառադիտական խմբակների, խմբերի և թանգարանի ակտիվից . այդ միջոցով թանգարանն ավելի հաջող կկազմակերպել դավառադիտական խմբակներին սպասարկումը և կապը նրանց հետ :

Ինչ վերաբերում է կոնսուլտացիաներին, դրանք ցանկալի յե կազմակերպել թանգարաններում կամ գրատահաազոտական կազմակերպություններում, տեխնիկայաններում և այլն :

2. ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Գավառադիտական աշխատանքների ծավալման և աշխատավորական մասսաներին այդ գործի մեջ ներգրավելու գործում խոշոր տնելիքներ ունեն պրոֆմիսուրեմական կազմակերպությունները :

Աշխատանքները ծավալելու ավելի մեծ հնարավորություններ կան պրոֆմիսութենական — բանվորական ակումբներում, կազմակերպելով այնտեղ գավառադիտական սեկցիաներ ու անկյուններ կամ սենյակներ :

Ինչպիսի գործնական, կազմակերպչական բնույթ պիտի ունենան դավառադիտական խնդիրները պրոֆմիսությունների ցանցում :

1. Բանվորական —պրոֆմիսութենական ակումբներում, գալրոցներում, ձեռնարկ-հիմարկություններ-

րում կազմակերպել դավառագիտական խմբակներ :

2. Կազմակերպել դավառագիտական արշավներ , վարի համար մշակել հատուկ տուրիստական-եքս-կուրսիոն մարշրուտներ դեպի քաղաքացիական կռիվ-ների դեպքերի վայրերը , դեպի արդյունարերական վայրերն ու կոլանտեսությունները (ծանոթանալ նը-րանց անվանի մարդկանց , ստախանովականների հետ , ծանոթանալ հեղափոխության և սպարմության հու-շարձանների հետ , հավաքել աղղազրական նյութեր , Փոլիլոբ և այլն) :

3. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի դավառ-դիաական մյուս թանգարանները , կազմակերպել շար-ժական ցուցահանդեսներ ակումբներում և հիմնարկու-թյունների ու ձեռնարկությունների կարմիր անկյուն-ներում :

4. Ակումբներում և կարմիր անկյուններում կազ-մակերպել դասախոսություններ , զեկուցումներ , դրույցներ տվյալ ձեռնարկության , բնակատվայրի , շրջանի , հանրապետության մասին և այլն :

3. ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՂՂՈՒՍ-ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՑԱՆՅՈՒՄ . (նրճիթ - բնթերցարան , կոլանտեսային ակումբ , կուլտուրայի տներ) :

1. Կազմակերպել դասախոսություններ , դրույցներ , գրականության ընթերցում մեր հայրենիքի մասին թեմաներով , նաև ծերունիների պատմություններն իրենց դյուզի ու շրջանի անցյալի մասին և այլն (հա-տուկ յերեկոներ) :

2. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի առաջավոր խորհանտեսությունները , կոլանտեսությունները , ՄՏԿ-ները , ԿԱՑ-ները՝ մոտիկից ծանոթանալու հա-

մար դյուղատնտեսութեան առաջավորների աշխատանքի արդյունավետ ձեւերին ու մեթոդներին :

3. Կազմակերպել ցուցահանդեսներ դյուղի և շրջանի անցյալն ու ներկան ցույց տալու համար (կազմել նաև նման արքուններ լուսանկարներով և այլն) :

4. Կազմակերպել Կուլտուրայի Տներում, ակումբներում և խրճիթ-ընթերցարաններում հատուկ անկյուններ՝ «Մեր կոլտնտեսությունը», նկարազրուէթյամբ ցույց տալ, թե ինչպիսի պայքար է մղվել կոլեկտիվացման համար, ցույց տալ կոլտնտեսութեան աճը, նրա տնտեսական ու քաղաքական ամրապնդումը, յերջանիկ տնկոր կյանքին հասնելը : Կազմակերպել նաև ցուցահանդես «Մեր շրջանը» և այլն :

Կազմակերպել ստախանովականների պատկերասրահ, սոցիալիստական դյուղատնտեսութեան առաջավորների պատկերասրահ և այլն :

5. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի պատմական վայրերը, հնությունները, քաղաքացիական կոխիւնների վայրերը և այլն :

Ինչպիսի թանգարաններում, այնպես և բանվորական ակումբներում, կուլտուրայի տներում, կոլտնտեսային ակումբներում կարելի յե կազմակերպել խրմբակներ, այնտեղ կարելի յե անցկացնել զրույցներ, դասախոսություններ, զեկուցումներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ և այլն : Փորձնական կայանների և խրճիթ-լաբորատորիաների հետ մեկտեղ կարելի յե փորձեր կատարել հողի կազմությունը ուսումնասիրելու, մոլախոտերի դեմ պայքարի արդյունավետ ձեւեր մշակելու ուղղութեամբ և այլն :

4. ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԵՈՐՀՈՒՐԳՆԵ-
ՐԻ ԿՈՒԼՏ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

Մեզ մոտ մինչև՛ հիմա դյուղխորհուրդների և քաղխորհուրդների կուլտ սեկցիաները հարկ յեղած ուշադրություն չեն դարձրել դավառագիտական աշխատանքներին և վստահորեն կարելի չե ասել, վոր վոչ մի խորհրդի կուլտ սեկցիա չի դրադվել մեր թանգարանների աշխատանքներով: Այդ առաջին հերթին արտահայտվում և նրանով, վոր կուլտ սեկցիաների սլլանների մեջ չեն անդրադարձել թանգարանների աշխատանքները և դավառագիտական խնդիրները:

Խորհուրդների մյուս սեկցիաների որինակով անհրաժեշտ և խոշոր չափով աշխուժացնել նաև կուլտ սեկցիաների աշխատանքները, պետք և բարձրացնել նրանց նշանակությունը, նկատի ունենալով սլատղամալորական խորհուրդների այն հսկայական դերը պրոլետարական դիկտատուրայի որդանների աշխատանքների սխաեմում, վորը դրի յե առնված Ստալինյան Սահմանադրության վոսկետառ ձեջերում:

Կազմակերպչական ձեռնարկումներից մեկը պետք և լինի այն, վոր խորհուրդների կուլտ սեկցիաներն իրենց նիստերում լսեն հետեվյալ հաշվետու զեկուցումները. ա) Գավառագիտական աշխատանքների վիճակի մասին (դպրոցում) Լուսժողկոմատի կամ ժողկրթրաժնի զեկուցումը. բ) Թանգարանների և դավառագիտական աշխատանքների դրվածքի մասին թանգարանների գիրեկտորների զեկուցումները. գ) Հեղափոխության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և հաշվառման վիճակի մասին — համապատասխան կազմակերպչյան զեկուցումը:

Կուլտ սեկցիաների այդ նիստերին պետք է մասնակցեն վոչ միայն սեկցիայի անդամները, այլ նաև զարոցի ակտիվիստները (աշակերտներ, ուսուցիչներ), գաղափարապետ ակտիվիստներ, պրոֆմիութենական ակտիվը, կոմյերիտական և պիոներական ակտիվը, ձեռնարկությունների և կոլտնտեսությունների ակտիվը, մասնագետների կողմից և այլն :

5. ՄԱՄՈՒԼ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՈՅԻՆ

Արանձնապես պետք է նշել մամուլի դերը : Մամուլը (պատի թերթեր, բազմատիրաթյուններ, տեղական և Ալենտարոնական մամուլը մինչև «Սորհրդային թանգարան» ժուռնալը), վորպես հասարակական մտքի կազմակերպիչ, խոշոր գործ ունեն կատարելու :

Մամուլը կարող է հաղորդել լավազույնների աշխատանքի փորձը, մամուլը կարող է սխտեմատիկ ինֆորմացիա տալ, մասսայականացնել պլանի վորոշ դրույթները, ակտիվին մորելիզացիայի յենթարկել դրանց շուրջը, ողնել ստեղծելու վերահսկողության և քննադատության հասարակական տրիրունա :

Մինչդեռ մեր թանգարանների և գաղափարապետության արդի վիճակը հեռու յե նշված ինդիլրները լիովին կատարելուց :

Թանգարանների և գիտահետազոտական հիմնարկների առաջնակարգ ինդիլրներից մեկն է նայել գաղափարապետական իմրակների համար հրատարակել ծրրադրեր, հրահանդեսներ, ձեռնարկներ, ստեղծել գաղափարապետական գրականություն : Այս ինդրում սուսալիկ փայլերը պետք է սնի Լուստողկոմատի թանգարանային-գաղափարապետական բաժինը :

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեր մեծ, Խորհրդային հայրենիքի ազատ ժողովուրդները ջերմ դպացմունքներով սիրում են իրենց մայր-հայրենիքը: Մեր յերկրի աշխատավոր ժողովուրդը, յերիտասարդությունը, ինտելիգենցիան, մեծ խաղաղասուբյաությամբ ու սիրով ուսումնասիրում են սոցիալիզմի յերկրի սքանչելի պատմությունը: Ամբողջ աշխարհում մեր յերկիրը միակն է, վորտեղ պատմական դիտության ծաղկման ու դարդացման համար ամենաբայն հնարավորություններ են ստեղծված:

Մեր բարձրագույն, միջնակարգ և այլ բաղմաբիվ դպրոցներում, ուսուցման վողջ սխտեմում պատմական առարկաներն իրենց պատվալոր ու արժանի տեղն ունեն:

Կուսակցության ու կառավարության վորոշումները դպրոցներում պատմության դասալանդման խնդիրների մասին, ամենաջերմ կերպով ընդունելեցին ժողովրդատարան ամենաբայն մասաների կողմից:

Միլիոնավոր մարդիկ բուռն ցանկությամբ ու չրտեսնված հետաքրքրություն ցուցաբերեցին դեպի մեր հայրենիքի հերոսական պատմության ուսումնասիրությունը:

Այժմ մենք ունենք այնպիսի խոշոր պատմական

դովանան, ինչպիսին և «Համ. Կ. (բ)Կ. պատմութեան համառոտ դասընթացը», վորը կտրմված և Համ-Կ. (բ)Կ. Կենտկոմի և անձամբ ընկ. ՄՍՍ.ԼԻՆԻ անմիջական նախաձեռութեամբ ու մասնակցութեամբ :

Ապա պրոֆ. Շեստակովի կազմած «ԽՍՀՄ ժողովուրդների պատմութեանը» և այլն :

Մեր յերկիրը հարուստ և պատմական ամենահարուստ հուշարձաններով, անցյալ կուրտուրայի, կենդանի աշխարհի յերեւելի կոթողներով, վորոնք պատմութեան ուսուցման խնդրում անփոխարինելի ծառայութեան կարող են մատուցել : Պատմութեան լավ դասադրքերից բացի, մեզ անհրաժեշտ և ստեղծել նաև գիտականորեն կազմակերպված պատմական թանգարաններ և շրջանային դավառագիտական թանգարաններով կազմակերպել պատմական բաժիններ :

Պատմութեան գիտողական, կենդանի ուսուցման լավագույն ձեռնարկ պետք և հանդիսանան նաև պատմութեան, կուրտուրայի, հեղափոխութեան և այլ բազմաթիւ շատ հետաքրքիր հուշարձաններն ու պատմական վայրերը : Ահա թե ինչու պետք և մեծ հոգատարութեան ցուցաբերել դեպի անցյալի այդ արժեքավոր հուշարձանների պահպանութեանը և վերականգնումը, վորոնք պետք և հանդիսանան մեր հայրենիքի պատմութեան գիտողական ուսումնասիրութեան նյութական հիմքը : Մեր յերկրում ունենք հսկայական թվով տարրեր բնութի հուշարձաններ ու թանգարաններ, վորոնք անհրաժեշտ բարձրութեան վրա չեն դրված :

Պատմութիւնը դառնում է վոչ միայն դիտութեան կարեւորագույն առարկաներից մեկը, այլ նաև մեր յերկրի բոլոր մեծահասակների ու փոքրահասակների քաղաքական, դպրոցական ու արտադպրոցական դաստիարակութեան միջոցներից մեկը: Այստեղից էլ յեզրակացութիւն—վոր դավառագիտական (հայրենագիտական) թանգարաններում ու դավառագիտական աշխատանքներում հատուկ տեղ պետք է տալ պատմութեան, կուլտուրայի և հեղափոխութեան մեծագույն հուշարձանների ու վաշրերի ուսումնասիրութեանը:

Այն ժամանակ հնարավոր կլինի տալ Խորհրդային Միութեան առանձին ժողովուրդների ճշմարտացի պատմութիւնը, վորպես «պատմութեան սուբյեկտ» և վոչ միայն վորպես «ժողովուրդների բնա տեսանկյունով, այլ կերպ սասձ, վորպես պատմութիւնն ինքնին, տվյալ ժողովուրդների համար բոլոր առանձնահատկութիւններով, ինչպես եկոնոմիկայի և քաղաքականութեան բնագալատում, նույնպես և կուլտուրայի բնագալատում» (Շեստակով):

Ահա այդ տեսակետից Խորհրդային Հայաստանը, վորպես հնադարյան կուլտուրայի դանձարաններից մեկը, մեր դավառագետ-պատմաբանների և պատմական թանգարանների ուսումնասիրութեան հետքերական որբեկտ է հանդիսանում:

Խորհրդային Հայաստանի բարձրաբերձ լեռների, ճյունապատ և անտառապատ լեռնաշղթաների չքնաղ լանջերին ու կանաչապատ ստորտներին, լեռնադաշտերի վրա և կարկաչուն գետերով ու սառնորակ սղբուրներով հարուստ հովիտների բարձրադիր վաշրերում կարելի յէ հանդիպել անցյալ հազարամյակների

կուլտուրայի բազմաթիվ հուշարձանների, վորոնց
Նշանակութունն անչափ մեծ և մեր յերկրի անցյալ
կուլտուրայի պատմության ուսումնասիրության հա-
մար:

Յեւ վաղ վոչ միայն Հայաստանի պատմության հա-
մար: Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետության վողջ տերիտորիան հարուստ և պատ-
մական նյութական ու գրավոր հուշարձաններով, վո-
րոնք իտար արժեք են ներկայացնում ամբողջ Կովկա-
սի և մերձավոր արեւելլյան յերկրների ժողովուրդների
ամենահնազարյան կուլտուրայի ու պատմության ու-
սումնասիրության համար: Հայ Ժողովուրդի պատ-
մությունը լի յե պայքարի ու հերոսական վայրուն
գրվազներով՝ մղված ստարյերկրա հատիչտակիչների
դեմ, հանուն իր գոյության պահպանության, վորի
բավադուն գրական կոթողներից մեկն և հանդիսանում
10-րդ դարի հերոսական եպոս «Սասունցի Դավիթը»:

Միայն Վաղարշապատի ձեռագրերի հոչակավոր մա-
տենադարանը ամենահարուստ և մանրադնին ուսում-
նասիրության աղբյուր կհանդիտանա գավառադիտա-
կան պատմական հարցերով հետքքրվողների համար,
վորով դժբախտաբար քիչ են գրադվում մեր պատմա-
բանները և այդ արժեքավոր նյութերը մինչև հիմա
դեռ մասսաների սեփականությունը չեն դարձել:

«Հնադարյան ձեռագրերի հոչակավոր պետական մա-
տենադարանը գոյություն ունի համարքա 1500 տարուց
ի վեր: Այնտեղ պահվում են ավելի քան 11.000 ձե-
ռագրեր (մանուսկրիպտներ) վորոնք մեզ են հասել
5-րդ դարից, այսինքն՝ Հայաստանում գերը յերեվան
գալու Ժամանակակիցից:

Հնադարյան պատմութեան այդ հիւանալի փաստա-
թղթերից շատերը անդուզական են (ունիկոմաներ) :
Իբրանք գրված են մագաղաթի վրա, Հնադարյան մի
քանի լեզուներով՝ պարսկերեն, յեթովպերեն (հարե-
շերեն), հրեական լեզվով և այլն :

Ձեռագրերի մեջ չարագրվում է Հայաստանի, Վը-
րաստանի, Հնդկաստանի, Բյուզանդիայի, Պարսկաս-
տանի և այլ յերթիւների ժողովուրդների կուլտուրայի
բազմադարյան պատմութիւնը : Հին հայկական խոշո-
րագունքն պատմիչների շարքում հատուկ տեղ են
գրաւում 5-րդ դարում ապրած Խորենացու համարչ-
խարհային համբալ ունեցող աշխատութիւնները :

Ուշագրութիւն են գրաւում 7-րդ դարում ապրած
հին վրացական աւանդուրդ պատմիչ Ջիվանշիրի լավ
պահպանված ձեռագրերը :

Ջիվանշիրը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղոր-
դում, փորոնք ստացուցում են հայ, վրացի և արքան
ժողովուրդների յեղբայրական աղգակցութիւնը :

Ձեռագրերը չափազանց վառ կերպով ցույց են տա-
լիս սոցիալական հարաբերութիւնները, ճարտարապե-
տութիւնը, արվեստը, կենցաղն ու բարքերը, սաղմա-
կան ստորատեղիան : Մանրամասն նկարագրվում են այն
ժամանակվա, այժմ վաղուց արդեն անհետացած քա-
ղաքները, մասնավորապէս հին Հայաստանի 4-րդ դա-
րի մայրաքաղաք Եփեսը : Խոր հնադարի այդ քաղաքի
փայլում, այժմ կատարվում են հնագիտական պեղում-
ներ : («Պրավդա»)

Մեր յերկրի պատմական խոշոր նշանակութիւնն ունեցող վայրերից և Գեղարդաձորը (Այրուվանք), վորը մտնում է պատմական Հայաստանի մեջ և ունի հետաքրքիր պատմութիւն: Այստեղ են դտնվում պատմական Գտնի-Գեղարդի հնութիւնները, վորոնց պատմութիւնը շատ սերտ կերպով կապված է պատմական Հայաստանի Փետրալական տների պատմութեան հետ, սկզբում՝ Չաքարյանների, ապա 12-րդ դարում Գուշյանների Փետրալական տների հետ:

Գեղարդաձորի հուշարձաններից հայտնի յեն վիշապները (մոտ 23 հատ), Գեղարդի վանքը, վորի պատմութիւնը սկսվում է 4-րդ դարից, Հալունց թառ կոչված հուշարձանը, Գտնիի մի քանի հուշարձանները և այլն:

Այս ձորը պատմական հուշարձանների մի սքանչելի գանձարան է, վորը խոշոր նյութ է հանդիսանում մեր անցյալ կուլտուրայի, ճարտարապետութեան, պատմութեան ուսումնասիրութեան համար:

Ապա ուշադրութեան արժանի յեն նաև Դիլիջանի պատմական հնութիւնները, վորոնց մի քանիսը քարե դարի և բրոնզե դարի հուշարձաններ են: Հայտնի յեն Դիլիջանի շրջանի հուշարձաններից Հաղարձինը, Գուշավանքը, Զուխտակ վանքը, Մաթոսավանքը, վիշապները և բազմաթիւ այլ հուշարձաններ, վորոնք կարտտ են մանրամասն ուսումնասիրութեան:

Արագած սարի լայն տարածված ստորոտները յեղև հարուստ են բազմաթիւ հնութիւններով:

Այստեղից է անցել Ուրարտույի թագաւոր Արդէշտին, Հին Արեւելքի առաջնահարկ նվաճողներից մե-

կը: Ահա այդ արշավանքների հուշարձանները, հին բերդեր և ժայռերի մեջ փորված սուր (Անբերդ և Բյուրակախան):

Հումեական լեզեոնները Լուսիուլլոսի, Պոմպեոսի, Անտոնիոսի, Մարկոս Ավրելիոսի, Հերակլ կայսեր բանակներն ավերումներ գործելով անցել են Արագածի լեռներով և գնացել տիրելու Արեւիկէքը: Նրանք բոլորն իրենց անցած ճանապարհի վրա թողել են հիշատակութիւններ:

13-րդ դարում Իվանե և Չաքարե յեղբայրները տիրում են «Նրակի» յերկիրը և Արագածի արեւիկէյան կողմում ամրացնում են Ամբերդ ամրոցը:

Այստեղ հայտնի են նաև Լուսաբերդ ամրոցը և մի շարք այլ հնութիւններ:

«Գտնվելով յերկու աշխարհների, յերկրագնդի մայր ցամաքների—Յեվրոպայի ու Ասիայի սահմանագծի վրա... Հայաստանը յեղել է անվերջ նակատամարտերի ու արշավանքների քառերաբեմ: Մեկ նվաճողներին փոխարինում էյին մյուսները» (ՊՐԱՎԴԱ):

Չափազանց արժեքավոր պատմական հնութիւններով հարուստ և Սեփանա լճի ափազանք, չքնաղ Լուսին իր շրջակայքով, Աշտարակի շրջանը, Չանդեղուրք, Չանդիրասարը և այլն:

Դժվար և մանրամասն թվել մեր յերկրի պատմական հուշարձանները և վայրերը, նրանց մասին կարելի չէ հատորներ գրել:

Այս բոլորը ներկայացնում են նյութական կուլտուրայի այն լավագույն կոթողները, վոր խոշոր ծառայութիւններ կմատուցեն մեր աշխատաւորական

մասաներին և դպրոցականներին, ուսումնասիրելու մեր հայրենիքի պատմությունը :

Այդ խնդրում խոչոր անելիքներ ունեն նաև մեր շքանային և կենտրոնական Գալատադիտական թանգարանները, վորոնք պետք է կազմակերպեն տվյալ շքանի պատմության բաժինը, ուր կհավաքվեն շքանում գտնված բոլոր պատմական հնությունների մասին տեղեկություններ՝ լուսանկարներով, եքսպոնատներով, նկարազրություններ և այլ նյութեր :

Այս աշխատանքներում խոչոր չափով և ակտիվորեն պետք է մասնակցեն մեր դավառադիտական ակտիվը, ուսուցչությունը, աշակերտությունը, կոմյերիսմիությունը և պիոներական կազմակերպությունը :

Այդ տեսակետից որինակելի աշխատանք են կատարել կիրովականի դավառադիտությամբ դբարգվող սուսուցիչներինց մի քանիսը :

Կիրովականի «Թադավորանիտ» կոչված բլրի շքանակաբում պեղումներ կատարելով, նրանք հայտարերել են մի շարք արժեքվոր իրեր, վորոնք այժմ պահվում են Յերելանի հնադիտական թանգարանում . այդ իրերը թանգարանների համար դիտական մեծ արժեք են ներկայացնում : Այդ հայտարերման կատարկցությամբ պիտի սսել, վոր ինչպես յերելում է, այս շքանը հարուստ է պատմական դամբարաններով, վորոնց հետագա պեղումները խոչոր նյութ կարող են տալ դիտական աշխատանքների համար :

Գալատադիտական պատմական ուսումնասիրությանների դործում ներդրավելով մասաներին, կազմակերպելով եքսպեդիցիաներ, հետադոտական խմբեր, Թքսիւրսիոն-տուրիստական արչավներ դեպի պատմա-

կան վայրերը, կազմակերպելով դավառադիրական
պատմական անկյուններ դպրոցներում, ակումբներում,
կուլտուրական, քաղաքական-կրթական մեծ աշխա-
տանք կատարած կլինենք մեր հայրենիքն ուսումնա-
սիրելու, ճանաչելու բնագավառում:

Մեր յերկրի անցյալ կուլտուրայի, քաղաքացիական
կախիների պատմության, ճարտարապետական կրթող-
ների ուսումնասիրման շուրջը կազմակերպելով լայն
հասարակայնություն, մենք վոչ միայն ապահոված
կլինենք հնությունների պահպանության գործը, այլև
կատեղծենք մեր յերկիրն ուսումնասիրող բոցավառ
հայրենասերների մի պատկառելի ակտիվ: Իսկ այդ
ակտիվը շատ մեծ անելիքներ ունի նյութական կուլ-
տուրայի հուշարձանների ու հնությունների ուսումնա-
սիրության բնագավառում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գալատացիտական ուսումնասիրութիւնները և դաստիարակական թանգարանները ցուցադրումների մեջ հսկայական տեղ ունի աշխարհագրութիւնը: Մեր յերկրի աշխարհագրութեան ուսումնասիրութիւնը չէ սպառնում միմիայն դպրոցով:

Աշխարհագրական դիտելիքների տարածման դործում շատ կարեւոր դեր ունեն նաև դաստիարակական թանգարանները և դաստիարակական ակտիվը:

Մեր դպրոցներում աշխարհագրութեան առարկայի դիտողականութիւնը ապահովելու տեսակետից խոշոր անելիքներ ունեն թանգարանները:

«Աշխարհագրութիւնը դպրոցում, — գրում է «ՊՐԱՎ, ԴԱՆ», — այն ուղիներից մեկն է, վորով ընթանում է պատանեկութեան իսկական մատերապիստական աշխարհայեցողութեան, ինտերնացիոնալիզմի, դեպի հայրենիքի քշումիներն ունեցած ատկութեան դաստիարակութիւնը»:

Այդ սպառնալու մեծ է այն պահանջը, վոր առաջադրվում է այդ դիտութեան դասատուներին: Նրանց խնդիրն է կենդանի, դրամիչ ձևով սպասանի սերնդին տալ դիտելիքներ աշխարհամասերի, յերկրների, ծովերի, գետերի, քաղաքների մասին, յերեխաների մեջ

սեր և անհուն նվիրվածութիւնն դաստիարակել զեպի մեր հայրենիքը :

Դիտողականութիւնը, հանրամատչելիութիւնը, կենդանի և գրավիչ ձեւով ներկայացնելն աշխարհագրութիւնը—ահա թե ինչը պետք է կազմի թանգարանի ցուցադրումների հիմքը :

Համառուտական ԿԳԿ նախագահութեան 1933 թ. ուստոսի 20-ի՝ «Դպրոցում դասավանդման դիտողականութիւնը բարձրացնելու համար թանգարաններն ոգտագործելու մասին» վորոշման մեջ ասված է .

Հատուկ ուշադրութիւն դարձնել բազմակողմանիորէն ոգտագործելու քանգարանները տարրական և միջնակարգ դպրոցներում դասավանդման դիտողականութիւնը բարձրացնելու համար... (դպրոցական եփսկուրսիաներ կազմակերպել, հատուկ շարժական ցուցահանդեսներ դպրոցների համար և այլն)» :

Սակայն պետք է նշել, վոր մեր թանգարանների և դպրոցների կապը միմյանց հետ շատ թույլ է և մեր ժողկրթութեան բաժինները բոլորովին չեն դրադվում թանգարանների ցուցադրումների հարցերով, չեն ոգտագործում թանգարաններն ուսուցման դիտողականութիւնն սպահովելու համար, դպրոցներում չկան դասառատակաան անկյուններ, վորոնք սպահովէին աշխարհագրութեան դասավանդման դիտողականութիւնը : ԽՍՀՄ ԺԿԽ-ի և Համ. Կ. (բ)Կ. Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշմամբ բացահայտվում է տարրական և միջնակարգ դպրոցներում աշխարհագրութեան դասավանդման թերութիւնները և նշվում են դրանք վերացնելու ուղիները :

Այլ վորոշումը հանձնարարում է ուժեղացնել աշխարհագրության դասավանդումը մեջ դպրոցներում : Վորոշման մեջ ասվում է .

«... Զգալիորեն մեծացնել ԽՍՀՄ աշխարհագրության ծախարը, ինչպես և ԽՍՀՄ տեսությունն ըստ հանրապետությունների, յերկրների ու մարզերի, այն հաշվով, վոր վճռականապես պարզեցվի ու թեթեւացվի ծրագրի ուսման նյութը, տնտեսական ու վիճակագրական մանրամասնություններից ու միաժամանակ այս տեսություններում ընդարձակվի յուրաքանչյուր հանրապետության, յերկրի ու մարզի աշխարհագրական բնութագիրը (դետերի, լճերի, ծովերի, մլխմայի, բուսական ու մենդանական աշխարհի նկարագրություն, բնակչության, խոշորագույն քաղաքների, յերկաթուղիների ու խճուղիների և այլոց բնութագրումներ)» :

Այնուհետև նույն վորոշման մեջ ասված է .

«... Ապահովել, վոր աշակերտների հիշողության մեջ ամուր մնան հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, դետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և աշակերտները լավ գիտենան աշխարհագրական քարտեզը ծրագրով հաստատված սահմաններում, շարագրանքը դարձնելով ավելի դիտողական, մատչելի, հանրամատչելի և գրավիչ» :

Աշխարհագրության դասավանդման և աշխարհագրական գիտելիքների տարածման գիտողականությունն ու մատչելիությունը ապահովելու խնդրում հսկայական անելիքներ ունեն դասառագիտական թանգարանները, վորոնք պետք է աջակցեն վոչ միայն դպրոցներին, այլ նաև մասնաներին, ճանաչելու համար

բապետութիւնը, այն վայրը՝ վորտեղ անհատն ապ-
րում է :

Գալառազխտական թանգարանում պետք է արաս-
հայտվի «յուրաքանչյուր հանրապետութեան, յերկը-
նու մարդի աշխարհագրական բնութագիրը» :

Ահա այդ տեսակետից ել խոշոր նշանակութիւն
պետք է տալ դպրոցական դալառազխտութեանը, վորի
նպատակն է աշակերտութեան միջոցով ուսումնասի-
րութեան յենթարկել վայրը, կոնկրետ շրջապատի աշ-
խարհագրական լանդշաֆտի դիտողութիւնների հիման
վրա կազմել վայրի բնութագիրը, բուսական և կեն-
դանական աշխարհը, գետերը, լեռները, կլիման, յերկ-
րաբանական կազմութիւնը և այլն, և այդ բոլորը
ցուցադրել դպրոցում, կազմակերպելով այնտեղ գտնա-
ռազխտական թանգարան կամ գալառազխտական տե-
կիւն :

Սա կկազմի աշխարհագրութեան առարկայի և
դիտողական, հանրամատչելի, գրավիչ ուսուցման
հիմքը :

Դպրոցական և շրջանային դալառազխտական թան-
գարանները պետք է հասուկ ուշադրութիւն դարձնեն
տվյալ վայրի բաղմակողմանի աշխարհագրական ու-
սումնասիրութեան վրա : Սովորաբար աշխարհագրա-
կան տվյալները պետք է տեղ գտնեն թանգարանի
բնութեան կամ բնա-պատմական բաժնի ցուցադրում-
ներում : Այդ բաժնում պետք է լայն կերպով արտահայ-
տել շրջանի, հանրապետութեան աշխարհագրութիւնը :
Այդպիսի աշխարհագրական ակնարկը պետք է արտա-
հայտի շրջանի, հանրապետութեան ներկա պատկերը,

Նրա ընտելութունը և մարդկային գործունեությունն հետևականքով ընտելության մեջ կատարված փոփոխությունները, աշխարհագրական միջավայրը, սևուրսները, բնակչության մասին կարեվոր տվյալներ և այլն:

Իհարկե, անհրաժեշտ և այս բոլորը տալ սերտ կերպով կապակցված պատմության և սոցիալիստական շինարարության բաժիններին հետ:

Մեր թանգարանների ընտելության բաժնի կազմակերպման սկզբումնքն ե լինելու աշխարհագրական լանդշաֆտներին սկզբունքը: Մա յե հիմնականը և կարեվորը: Մա յե յե լակետը: Ժամանակակից աշխարհագրական գիտություն մեջ այս և ընդունված յերկրների ու առանձին տերիտորիաների նկարագրման գործում:

Ի՞նչ և լանդշաֆտը: Աշխարհագրական գիտություն մեջ լանդշաֆտ կոչվում և աշխարհագրական բոլոր ու հիմնական ելեմենտների միասնությունը, ամբողջականությունը, ինչպես որինակ՝ ռելյեֆը, հողը, կլիման, ջրային ռեժիմը, բուսական և կենդանական աշխարհը, վորոնք բոլորը միմյանց հետ վորոչ կապակցություն մեջ են գտնվում: Այդ փոխադարձ կապը աշխարհագրական առանձին ելեմենտների միջոցով հնարավորություն և ընձեննում յերկրի մակերևույթի վրա առանձնացնել խոշոր լանդշաֆտային գոտաները և նրանց առանձին մասերը, վորն ընդունված և անվանել աշխարհագրական լանդշաֆտ տերմինով: Մյուս կողմից պետք և հիշել, վոր աշխարհագրական լանդշաֆտ հասկացողությունը իր մեջ ընդգրկում և նաև տվյալ տերիտորիայի վրա տեղի ունեցող բոլոր յերեվությունների գիտությունները՝ կապված «ընտ-

Թյունը փոխելու» մարդկային փողջ բազմապիսի դործունեյության հետ, վոր արտահատվել և տվյալ տերիտորիայի վրա, որինակ՝ կուլտուրական ցանքեր և տունկեր, արհեստական կառուցվածքներ, բնակավայրեր, ճանապարհներ, նորակառույց շինքեր, գործարաններ, ելեկտրոկայաններ, յերկրի ընդերքի հետախուզություններ և այլն: Հաճախ մեր թանգարաններում կարելի յե դիտել բնության բաժնի միակողմանի ցուցադրում, յերբ աշխարհագրական լանդշաֆտը ցուցադրված և միակողմանի, այսինքն՝ յերբ ցույց և արված չըջանի, հանրապետության աշխարհագրական դիրքը, յերկրաբանությունը, պալեոնտոլոգիան և ոգտակար հանածոները, սելյեֆը, հողը, կլիման — սակայն բացակայում և մարդկային գործունեյության հետ կապված փոփոխությունների նկարագիրը:

Այդպիսի ցուցադրումը չի կարող լրիվ պատկերացում տալ փոջ ամբողջ հանրապետության և փոջ ել չըջանի մասին:

Ցուցադրելով լանդշաֆտի առանձին մասերը, թանգարանը այցելույին չի կարող լրիվ պատկերացում տալ նույնիսկ տվյալ չըջանի բնության մասին, ինչպես նաև այն որինաչափությունների մասին, վորով նրանք զարգանում են: Այսպիսով՝ յերկրի աշխարհագրական դեմքի ճիշտ ցուցադրման բացակայությունը մեր ներկա թանգարանային ցուցադրումներում լուրջ և խոշոր քաղաքական թերություն և: Այդ թերությունը պետք և վերացնել: Կուսակցության և կառավարության ցուցմունքները դպրոցում աշխարհագրության դասավանդման մասին ամբողջու-

թյամբ պետք է հաշվի առնեն մեր դավառագիտական և պատմական թանգարանները :

Դպրոցական և շրջանային դավառագիտական թանգարանները պետք է դառնան մասսաներին և դպրոցականներին յերկրի, շրջանի, հանրապետության աշխարհագրական դեմքը ցույց տալու հիմնական բաղաններ :

Հենց թանգարանն այն հիմնարկութունն է, վորտեղ բնավորը, կոլտնտեսականը, ծառայողը, դպրոցականն այցելելով՝ հնարավորութուն պետք է ունենա ծանոթանալու իր յերկրի հետ, շրջանի, նրա ռելյեֆի, բնական հարստութունների, նրա բնական զեղեցկութուններին, ազդարնակչության կաղմի, տերիտորիայի, բնակչության խտության, մարդու բնությանը տիրելու հետ և այլն :

Աշխարհագրական ցուցադրումը պետք է կառուցվի այդ դիտության սկզբունքների և պահանջների հիման վրա, այնպես, վոր ընդդրկի աշխարհագրական լանդշաֆտի բնութագիրն իր ամբողջականությամբ :

Դավառագիտական թանգարանների բնության բաժինն այլ կերպ կարելի չէ անվանել «հայրենի յերկրամասի (հանրապետության) աշխարհագրության բաժին» : Յեւ անհամեր թանգարանների բնության կամ աշխարհագրության բաժնի ցուցադրումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը, վորպեսզի ամբողջությամբ արտահայտվի աշխարհագրական լանդշաֆտը :

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԵՐՄԾՈՒԹՅՈՒՆ .-- Հանրապետության, շրջանի քարտեզները և նրանց տեղը ԽՍՀՄ-ում, ռելյեֆի, հողի, կլիմայի քարտեզներ :

ժամանակակից բնության աշխարհագրական լանդշաֆտը՝ լճեր, ճահիճներ, անտառներ, անապատներ: Տվյալ տերիտորիայի ազգաբնակչության տարազադթը, տարաբնակեցումը (расселение) և խտությունը: Վարչական բաժանումը:

2. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ (ՇՐՋԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՅԵՐԿՐԱՖԱՆԱԿԱՆ ԱՆՅՅԱԼԸ.— Այս բաժնի ցուցադրումն սկսվում է այն ամենատեղեկական եզրախայից, վոր հայտարարված է տվյալ բնակավայրի յերկրի կեղևի կառուցվածքում: Իսկ ավելի հին եպոխտները պետք է արտահայտվեն թանդարանների ներածական բաժիններում, ինչպես որինակ՝ յերկրի ծաղմանը միերաբերվող ցուցադրումներում:

Վայրի յերկրաբանական անցյալի ցուցադրումը պետք է շարունակաբար տրվի մինչև չորրորդական շրջանը: Հետագայում տրվում է վայրի Ֆիզիկո-աշխարհագրական ուրվագիծն իր ներկա գծերով:

3. ՎԱՅՐԻ ՆԵՐԿԱՎԱԿՆԻԿԱԼ.— Վայրի ընդհանուր բնութագրման մեջ տրվում են՝ ուելեֆը, հիդրոգրաֆիան, հողերն ըստ իրենց ծաղման և ընդհանուր բաշխման, կլիման և այլն: Ապա, ընդհանուր ցուցադրումը բաժանվում է յերկու մասի, վորտեղ ցույց են տրվում լանդշաֆտային գոտիները և տեղական լանդշաֆտները: Լանդշաֆտային գոտիների և առանձին լանդշաֆտների բնութագրման մեջ տրվում են նրանց հողաչեքերի, միկրոկլիմայի, ջրային սեփեմի, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները: Բացի դրանից տրվում է նաև լանդշաֆտում արտահայտված մարդու գույտությունտեսական գործունեության արդյունքները:

Մեծ քաղաքները և այլ խոշոր բնակավայրերը արվում են իրենց լանդշաֆտով, իրենց տերիտորիա-
յի, ազգաբնակչութան, եկոնոմիկայի ավելի մանրա-
մասն բնութագրով: Հավանական և ավելի մեծ տեղ
հարկավոր լինի հատկացնել աշխարհագրական ցու-
ցադրումներում լանդշաֆտների նկարներին (նկարչու-
թյուն, պատկեր, լուսանկարներ):

Ընդհանուր բնության (աշխարհագրության)
բաժնի ցուցադրմանը հարկավոր կլինի ավելացնել
նաև մի հատված՝ վերականգնված լանդշաֆտը: Իսկ
այդ ի՞նչ և նշանակում:

Տվյալ վայրի աշխարհագրության նկարագրու-
թյունից անմիջապես հետո պետք և տալ վայրի պատ-
մության ցուցադրումը:

Սովորաբար և անխուսափելիորեն այդ պատմու-
թյան սկիզբը համարվում և այն որվանից, վոր գե-
տությունն արձանագրել և տվյալ վայրում (յերկրում,
հանրապետությունում) մարդու յերևան գալու մոմեն-
տը: Այստեղից ել ակտիվ և բաժնի պատմական հատ-
վածք:

Աշխարհագրական փոփոխությունները, վորոնք
տեղի յեն ունեցել յերկրում կամ տվյալ վայրում,
մարդկային հասարակության դործունեյության զար-
գացման հետ զուգընթաց, պետք և յերևան գա և
ցուցադրվի նրա զարգացման համեմատաբար ավելի
խոշոր՝ շրջաններում, վորոնք պետք և մտնեն պատ-
մության բաժնի թեմատիկ պլանի մեջ, նույն ժամա-
նակազրական կարգով: Թանգարանում այդ ցու-
ցադրումը կարելի յե կադմակերպել բազմաթիվ յեղա-
նակներով, աշխարհագրական հայտնաբերումների և
հետազոտությունների քարտեզներով, նրա կուլտու-

բախան լանդշաֆտի քարտեզով, կարևորագույն աշխարհագրական հայտնաբերումների ցուցադրությամբ, ճանապարհորդությունների, հայտնի հետախուզողների և ճանապարհորդների գործունեյության բնութագրմամբ և այլն:

Այսպես պետք է կառուցվի ընդհանուր դժերով դալառագիտական թանգարանի աշխարհագրական բաժնի ցուցադրման պլանը: Իհարկե, այս պլանը կաբելի յե հետադաշում ավելի լայնացնել ու խորացնել: Այդ աշխատանքը թողնում ենք մեր ախտիվ գամառապետներին և աշխարհալրության դասատուներին, վորոնք թանգարանային ցուցադրումների կազմակերպման ենտուզիաստներն են հանդիսանալու:

Թանգարանային ցուցադրման մեջ մտցնելով շքանի, հանրապետության աշխարհագրության ցուցադրումը, դրանով մենք խոշոր չափով նպաստած կլինենք աշխարհալրության դիտողական, մատչելի, դրավիչ դասավանդմանը և կուսակցության ու կառավարության վորոշումների լույսի տակ, աշխատավորական մասսաները և հաղարավոր դպրոցականներն ավելի մեծ սիրով ձեռնամուխ կլինեն մեր սոցիալիստական հայրենիքի ուսումնասիրության դործին:

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԵԼՔ *)

Հանդատանալ բնութեան ծոցում, քայլել ծագիկներէ միջով, անուշահոտ բուրմունքներով լի չլիքապառուս, ծանոթանալ տեղանքի հետ, դիտել յերկրարանական կառուցվածքը, ծանոթանալ տեղի քաղաքացիական կռիվների կարևոր դեպքերի հետ, ծանոթանալ կոլյանտեսութեան, խորհանտեսութեան աշխատանքների հետ և ապա Ֆիլիկտայես ու մտավորապես հանդատացած վերադառնալ քաղաք—գործարան ու նոր, թարմ ուժերով անցնել աշխատանքի:

Այս և տուրիստական արտելքի նպատակը:

«Տուրիստական արտելք»՝ նշանակում և մեկ կամ մի քանի որ դուրս գալ քաղաքից, կատարել տուրիստական ճամբորդութիւն, վորի ընթացքում առաջագրելով վորոշ խնդիր, ձգտել այդ խնդրի կատարմանը:

Տուրիզմի ամենամասսայական ձևերից մեկը, դահանգստի որվա տուրիստական արտելքներն են: Այս տուրիստական արտելքն ունի մեծ մասամբ ինքնագործ բնույթ:

Ահա թե ինչու հանգստի որվա արտելքը կարող է

*) Արտելք—ВЫЯЗКА

կազմակերպել ամեն մի փոքր կոլեկտիվ, նույնիսկ յուրաքանչյուր ընտանիք:

Խորհրդային Միութեան մեջ խոշոր չափերով պարզացած և ինքնագործ տուրխատական արտելքը:

Մակայն մեզ մոտ դեռևս բոլորը չեն ոգտվում հանգստի այդ լավագույն ձևից:

Դեռևս շատ-շատերն անծանոթ են տուրխատական միորյա հանգստի կազմակերպմանը:

Ով չի ձգտում դեպի արելք, ողն ու ջուրը, նա չի կարող առողջ լինել, չի կարող ոգտակար լինել հասարակութեանը:

Ամեն մի խորհրդային քաղաքացի պետք է պիտե՛նա մեր յերկրի հեղափոխական շարժումների պատմութեանը, ծանոթ լինի մեր յերկրի սոցիալիստական շինարարութեանը, նոր կենցաղին և վերջապէս պետք է ճանաչի մեր սոցիալիստական հայրենիքը: Իսկ այդ բոլորը կարելի չէ ձեռք բերել և ծանոթանալ այդ բոլորի հետ տուրխատական արտելքի միջոցով, այցելելով մեր կոլանտեսութեանները, խորհատեսութեանները, գործարանները, դրուցելով քաղաքացիական կռիւների մասնակիցների հետ, մեր յերկրի անվանի մարդկանց՝ շքանշանակիրների, ստախանովականների և մյուսների հետ:

Այդ աշխատանքը պետք է վլխավորի հիմնարկութեան—ձեռնարկութեան Լենինյան կոմյերիտմիութեանը, գործարկոմի—տեղկոմի սերտ ոժանդակութեամբ և կուսակցական կազմակերպութեան դեկավորութեամբ:

Տուրխատական արտելքը պետք է լավ կազմակերպել, այնպես, վոր մեկ անգամ մասնակցողը ցան-

կություն ունենա յերկրորդ անգամ ևս մասնակցելու
և վոչ թե հուսահատվի, ձանձրանա, դատարկ ժա-
մանցի վերածվի լուրջ տուրխտական արտելքը և
դժգոհություն առաջ բերի մատնակիցների մեջ:

Տուրխտական արտելքը պետք է կաղձակերթել
ծրադրված ձևով և նախորոք լուրջ նախաստորադաս-
վելով:

Ծրադիրը կաղձակելիս պետք է հաշվի առնել հե-
տեվյալը. արտելքի համար ընտրել ընությամբ ավե-
լի դեղեցիկ վայրեր, հետաքրքիր եքսկուրսիոն որ-
յեկաներ, մշակել ճիշտ մարչրուտը, նշել անդիրը,
վորը պետք է հետաանդի տուրխտը ճամբորդության
ընթացքում, պատրաստել տուրխտական անհրաժեշտ
հանդերձանքը, սնունդը և այլն: Անհրաժեշտ է նաև
ունենալ դրականություն և քարտեզներ տուրխտակա-
ն արտելքի վայրի մասին:

Արտելքի հաջողությունը խոշոր չափով կախված
է նաև նրանից, թե ինչպիսի մարչրուտով կկատար-
վի արտելքը, այլ կերպ ասած մարչրուտի հաջող
ընտրությունից:

Ընտրված մարչրուտը պետք է բավարարի հետե-
յալ պահանջները.

- 1) Անցնել մեծ մասամբ անտառապատ վայրերով,
չոր ու առողջ կլիմա ունեցող տեղերով:
- 2) Վայրում պետք է լինեն հետաքրքիր տուրխ-
տական—եքսկուրսիոն որյեկաներ:
- 3) Պետք է լինի գետ կամ լիճ լողանալու հա-
մար:

Բացի գրանից ընտրված մարչրուտը պետք է
սժաված լինի նաև վորոչ առաջադրված խնդրի կա-

տարման համար նախադրյալներով՝ յերկրաբանական, աշխարհագրական, հեղափոխական շարժումների, քաղաքացիական կռիւլների պատմութեան վերաբերյալ տեղեկութիւններ հալաքելու համար և այլն:

Ինչպիսի մարչրուտ ել ընտրած լինի տուրխատական ինքնադործ խմբակը, պարտադիր կերպով նա պետք է դեկաւարմի հմուտ կոնսուլտանտի ցուցմունքներով, յեղած դրականութեամբ և քարտեղով:

Տուրխատական արտելքը պետք է կատարել խիստ մշակված ուժիմով, այսինքն՝ պետք է ճշտորեն վորոշել դուրս դալու ժամանակը, քայլելու, հանդատանալու տեղն ու ժամանակը, նախաճաշելու, քնելու ժամանակը և այլն:

Առանց նախորդք մշակված տուրխատական արտելքի խիստ ուժիմի, նույնիսկ մի քանի կիլոմետր համբորդութեան դեպքում անխուսափելիորեն առաջ կդա ուժասպառութիւն և հողնածութիւն:

Պետք է քայլել ազատ շարքերով իրարից չբաժանակելով:

Առջևից պետք է գնա մեկը՝ «առաջավորը», վորից առաջ անցնել վոչ վորք չի կարող և վերջից գալիս է մեկ ուրիշը՝ «վերջափակողը», վորից հետմնալ վոչ վորք չի կարող, — հակառակ դեպքում կբատացվի այն, վոր տուրխատական խմբից մի քանիսը առաջ կանցնեն, մի քանիսը հետ կմնան և շուտքը կչարժվի ցաք ու ցրիվ շարքերով, կարող են իրար կորցնել, դժբախտ դեպքերի պատճառ դառնալ և այլն:

Յուրաքանչյուր 50—60 բոպե քայլելուց հետո

պետք է կարճատեղ հանգիստ տալ՝ 5-ից մինչեւ 10
րոպեյի սահմաններում :

Շարժման ժամանակ հաճախ կարելի չէ հանդի-
պել դաշտում դույնըզդույն ծաղիկների և ցունազան
սրտուղների, այդպիսի դեպքերում պետք է շարժվել
փաշրիկ կանգառներով, վորպեսզի տուրիստական ար-
տելքի մասնակիցները հնարավորություն ունենան
ծաղիկ և պտուղ քաղելու :

Հասնելով մեծ դադարքը կամ նշանակված վայրը
(ПРИВАЛ) պետք է ընտրել մի հով տեղ, անմիջապես
հանգստանալ (պառկել կամ նստել), ապա յեթե մո-
տիկ դետ կա, լողանալ (10—15 րոպե) :

Այդ միջոցին նշանակված հերթապահները պետք
է գրադվեն ճաշ պատրաստելով : Ճաշից հետո պետք է
տալ մեկ ժամ լիովին հանգիստ, վորից հետո տու-
րիստական խումբը կդիտե եքսիուրսիոն որյեկտը,
ապա թեյ կխմի, մի փոքր կհանգստանա և հետո կը-
վերադառնա :

Արտելքը չպետք է ծանրաբեռնել մի քանի տու-
րիստական որյեկտներ դիտելով կամ մի քանի խնդիր
կատարելով :

Ավելի լավ է դիտել մեկ տուրիստական որյեկտ
կամ վերցնել վորեւե մի խնդրի ուսումնասիրությու-
նը :

Ճամբորդության ընթացքում դադարքի տեղերը
ընտրելիս պետք է ընտրել սովերաս և չոր տեղե-
րում :

Մեծ դադարքներն ավելի լավ է կաղմակերպել
դետերի բարձր ավերին, կամ անտառի յեղերքին չոր
բացատներում :

Հազուադր պետք է լինի թեթև և մարմնի վրա

ազատ, վորպեսզի շարժումներն ազատ կատարվեն :

Արևահարությունից և ալրվածքներից խուսափելու համար պետք է թեվերը, վիզը և դուխը ծածկված պահել :

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կոշիկների վրա, վարձք պետք է լինեն փոփոխ համապատասխան, շեղմեն վտուր և ցածր կրունկ ունենան :

Տուրիստական արտելքի ընթացքում պետք է լուրջ ուշադրություն դարձնել անձնական հիգիենայի վրա :

Այսպես որինակ՝ ատամները մաքրել, ճաշից հետո բերանը վողոզել, ճաշից առաջ ձեռքերը լվանալ և այլն : Ատանձնապես կարևոր է ուշադրությամբ խնամել փոսքերը՝ յեղունդները կտրել, արտելքից առաջ և հետո՝ նույնպես և մեծ դադարքներին լվանալ փոսքերը, բուժել կոշտուկները (մագուլները), արորվածքները և քերվածքները : Չի կարելի փոտարքիկ քայլել և սրտակել խոնավ գետնի վրա :

Մեծ նշանակություն ունի նաև ճանապարհին ճիշտ կերպով սնվելը և ջրի գործածությունը : Վոչ մի դեպքում չի կարելի ուտել քայլելիս կամ կանգնած :

Արտելքից առաջ պետք է կուշտ նախաճաշել, մեծ դադարքին՝ մոտ ցերեկվա ժամը 12-ին ճաշել (տաք կերակուր) և հանգստանալուց հետո վերադարձից առաջ թեյ խմել :

Ճանապարհին չի կարելի շատ ջուր խմել : Դա քրտինք է առաջացնում և թուլացնում և որդանիզմը : Ջուրը պետք է խմել միայն մեծ դադարքներին փոք-

րիկ կումերով և 10-ից 15 ըսպի հանգստանալուց հետո :

Վորևե դժբախտ դեպքում առաջին ոգնությունը հասցնելու համար պետք է վերցնել մի փոքրիկ դեղարան և վիրակապական իրեր :

Այս բոլորը այն նվազագույնն է, ինչ պետք է դիտենան ամենքը, ովքեր միտրյա տուրիստական արտելք են կատարում, դուրս գալով քաղաքից կամ դյուզլից :

Միտրյա տուրիստական ճամբորդությունից հետո կազդուրվելով ու ամրապնդվելով Փիդիկապես, հարրսաացնելով ձեր մտավոր հորիզոնը նոր ու նոր տպավորություններով ու բազմաթիվ ծանոթություններով, վերադառնում եք տուն, թարմացած ու առույգ, նոր յեռանդով շարունակելու ձեր աշխատանքը :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

1. Հեղինակի կողմից . . . - 3
2. Խորհրդային դավառագիտութեան նպատակը . . . 5
3. Ի՞նչ և դավառագիտութիւնը - . . . 14
4. Գաղափարական թանգարաններ 18
5. Ինչպե՞ս կազմակերպել տեղական դավառագիտական թանգարանը 22
6. Գաղափարագիտութեան կազմակերպչական խնդիրները 27
7. Պատմութիւն և դավառագիտութիւն . . . - . . . 35
8. Աշխարհագրութիւն և դավառագիտութիւն . . . 44
9. Տուրիստական արտելք 54

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Литература

1. «Советский музей» № 1—7 1938 г.
2. Письмо — указание НКП РСФСР «о постановке и организации краеведческой работы» 1937 г. 10/VI.
3. Смидович П. Г. и Кржижановский Г. М. «Социалистическое строительство и краеведение».
4. Экскурсии в культуру — методический сборник.
5. Кругликов — Школьный краеведческий музей и его работы.
6. Գյառնի-Գեղարդ. Պ. Հ. Պ. Կոմիտեյի հրատարակութիւնն.
7. Վ. Դարյան—Ալպինիզմը Հայաստանում.
8. Վ. Դարյան—Ձյունապատ լեռներում.
9. Վ. Դարյան— Դեպի Ելբրուս.
10. Վ. Դարյան— Ալպինիստի հանդերձանքը.

В. Дарьин.

ЗАДАЧИ СОВЕТСКОГО КРАЕВЕДЕНИЯ.

1939 г.

Брест

4400 | 2018


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043360

304
ԳԻՆԸ | ՌՈՒԿ:

174



ՄԱՐԿ.